ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ Ն 22-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ավագանու անդամների քվեարկության արդյունքները.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարան համայնքի ավագանու՝ 22.03.2019 թվականի արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՕՐԱԿԱՐԳ

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.03.2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԺԱՄԸ՝ 14:00

1. Ապարան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

/զեկ. Կ.Եղիազարյան/

2. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողատարածքի նպատակային նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին:

/զեկ. Վ.Սուքիասյան/

3. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղի վարչական տարածքում գտնվող 2.4367հա և 0,2321հա հողատարածքների նպատակային նշանակությունը փոխելու մասին:

/զեկ. Վ.Սուքիասյան/

4. ՀՀ կառավարության կողմից Ապարան համայնքին հատկացված բազմաֆունկցիոնալ ունիվերսալ տեխնիկական միջոցները և ավտոմեքենաները համայնքային սեփականություն ճանաչելու և գույքագրելու մասին:

/զեկ. Հ.Մկրտչյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 23-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով, համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Վարդենուտ գյուղում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող (ծածկագիր՝ 02-102-0114-0029) 0,1 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի գործառնական նշանակության հողամասը փոխելուն և այն դարձնել որպես բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Ընդունել ի գիտություն, որ առաջարկված հողակտորը հարակից է հասարակական կառուցապատման հողատարածքին և նախատեսվում է կառուցել արագ սննդի սպասարկման օբյեկտ:

3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 24-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔՈՒՉԱԿ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2.4367ՀԱ ԵՎ 0,2321ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 12.03.2019թ-ի թիվ 14 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 31-րդ կետերով և ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղի վարչական տարածքում գտնվող <<ԷՆ ԷՅ ՈՒՈԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ>> ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2.4367հա /կադաստրային ծածկագիր՝ 02-111-0235-0052/ վարելահողը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական գործառնական նշանակության՝ խմելու ջրի շշալցման արտադրամաս կառուցելու նպատակով:
2. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Քուչակ գյուղի վարչական տարածքում գտնվող <<ԷՆ ԷՅ ՈՒՈԹԵՐ ԿՈՄՊԱՆԻ>> ՓԲԸ-ին անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2321հա /կադաստրային ծածկագիր՝ 02-111-0235-0050/ արոտավայրը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքների գործառնական նշանակության՝ ինքնակամ կառուցված խմելու ջրի խորքային հորը և ջրընդունիչը օրինականացնելու համար:
3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 –րդ հոդվածի 30-րդ մասի սահմանված կարգով նշված փոփոխությունն արտացոլել հերթապահ քարտեզում:
4. Փոփոխված հողակտորները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել 2019թ. հողային հաշվեկշռում:
5. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության, հողաշինության և ծրագրերի բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՐՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 25-Ա

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՅՔԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ ՀՀ կառավարության կողմից զարգացման ներդրումային ծրագրերի շրջանակներում Ապարան համայնքին հատկացվել է՝ ANT 750 մակնիշի ունիվերսալ փոքր բարձիչ, JCB 3CX ունիվերսալ էքսկավատոր բարձիչ, ՈՒԱԶ-236324-101 և ՄԱԶ-490143-390 մակնիշների կոմունալ նշանակության ավտոմեքենաներ, համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան համայնքին հատկացված բազմաֆունկցիոնալ՝ ANT 750 մակնիշի ունիվերսալ փոքր բարձիչը, JCB 3CX ունիվերսալ էքսկավատոր բարձիչը, ՈՒԱԶ-236324-101 և ՄԱԶ-490143-390 մակնիշների ավտոմեքենաները ճանաչել համայնքային սեփականություն:
2. ANT 750 մակնիշի ունիվերսալ փոքր բարձիչը, JCB 3CX ունիվերսալ էքսկավատոր բարձիչը, ՈՒԱԶ-236324-101 և ՄԱԶ-490143-390 մակնիշների ավտոմեքենաները գույքագրել որպես համայնքային սեփականություն և ընդգրկել Ապարան համայնքի հաշվեկշռում:
3. ANT 750 մակնիշի ունիվերսալ փոքր բարձիչը, JCB 3CX ունիվերսալ էքսկավատոր բարձիչը, ՈՒԱԶ-236324-101 և ՄԱԶ-490143-390 մակնիշների ավտոմեքենաները հանձնել <Ապարան համայնքի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ին պահպանման և շահագործման նպատակով:

Ավագանի՝ (կողմ - 10) (դեմ - 0) (ձեռնպահ - 0)

Ասատրյան Արամ
Գեղամյան Խաչիկ
Գրիգորյան Կարեն
Թադևոսյան Հայկազուն
Կարապետյան Արտյոմ
Կարապետյան Էդգար
Մակարյան Վահան
Շահբազյան Հովհաննես
Պետրոսյան Արա
Փարվանյան Արթուր

Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան